Կազմված է «03» մարտի 2025թ.
Բաղկացած է 4 (չորս) թերթից
Տպագրված է 3 (երեք) օրինակ
ՕՐԻՆԱԿ 2

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»
«Հայաստանի ազգային
ագրարային Համալսարան» հիմնադրամի
Հոգաբարձուների խորհրդի 24.01.2025թ.
նիստի որոշմամբ
Արձանագրություն թիվ 1/25
Տնօրենի (Ռեկտորի)
պարտականությունները
կատարող

Հ. Ս. ՋԱԲՐՅԱՆ
«03» մարտի 2025 թ.

«ԳՐԱՆՑՎԱԾ Է»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 07.09.2012թ
Գրանցման համար 222.160.699243
ՀՎՀՀ 01507028
07.09.2012թ. գրանցված Կանոնադրության
թիվ 005.3 փոփոխությունը գրանցվել է
Իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից 08.04. 2025թ.

Աշխատակից

Փ Ո Փ Ո Խ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ա Ն

ԵՐԵՎԱՆ 2025 թ.

Փ Ո Փ Ո Խ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ա Ն

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի 2025 թվականի հունվարի 24 -ի նիստի (Արձանագրություն թիվ 1/25) որոշմամբ կատարվել են «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Կանոնադրության հետևյալ փոփոխությունները.

1. Կանոնադրության 43-րդ, 45-րդ կետերում «ուսումնական վարչության» բառերը փոխարինել **«ուսումնական գործընթացի կառավարման վարչության»** բառերով:

2. Կանոնադրության 45-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

45. Գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են ռեկտորը (նախագահ), պրոռեկտորները, դեպարտամենտների ղեկավարները, գիտական քարտուղարը, ուսումնական գործընթացի կառավարման վարչության պետը, գլխավոր հաշվապահը, մասնաճյուղերի, գիտահետազոտական ինստիտուտների, կենտրոնների տնօրենները, ֆակուլտետների դեկանները, արհմիութենական կազմակերպության նախագահը, ուսանողական խորհրդի նախագահը, ինչպես նաև ռեկտորի նշանակմամբ կառուցվածքային այլ ստորաբաժանումների ղեկավարներ և համալսարանի առանձին դասախոսներ ու գիտաշխատողներ, հանրապետության գիտության առաջատար մասնագետներ, համալսարանի ուսանողության ներկայացուցիչներ: Ի պաշտոնե և ռեկտորի կողմից նշանակվող անդամների թիվը չի կարող գերազանցել գիտական խորհրդի թվակազմի 50 տոկոսը: Համալսարանի ուսանողության ներկայացուցիչների թիվը չի կարող պակաս լինել գիտական խորհրդի թվակազմի 25 տոկոսից:

3. Կանոնադրության 43-րդ կետից հանել «գիտահետազոտական ինստիտուտների» բառերը և «դեկանները» բառից հետո ավելացնել «և Համալսարանի ռեկտորատի կանոնակարգով նախատեսված այլ անդամներ» բառերը:

4. Կանոնադրության 50-րդ կետի 3-րդ ենթակետում «27-րդ» թիվը փոխարինել «29-րդ» թվով:

5. Կանոնադրության 19-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
4) անձամբ իրականացնելու ձեռնարկատիրական գործունեության այն տեսակները, որոնք սահմանվում են համալսարանի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ՝
ա. ագրարային և հարակից ոլորտների հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության կազմակերպում,
բ. դիմորդների նախապատրաստական դասընթացների և այլ կարճաժամկետ դասընթացների կազմակերպում,
գ. գիտամանկավարժական կադրերի պատրաստում, վերապատրաստում, մասնագիտական որակավորման բարձրացում,
դ. գիտահետազոտական աշխատանքների իրականացում,
ե. անասնաբուժական օգնության կազմակերպում,
զ. գրասենյակային մեքենաների և սարքավորանքի վարձույթի և լիզինգի իրականացում,
է. խորհրդատվական, փորձագիտական ծառայությունների մատուցում,
ը. ուսումնագիտաարտադրական գործունեության ծավալում, գյուղատնտեսական մթերքների արտադրություն, վերամշակում և արտադրանքի իրացում,
թ. հրատարակչական, տպագրական գործունեության ծավալում և արտադրանքի իրացում,
ժ. սովորողների և աշխատողների սննդի կազմակերպում,
ժա. համակարգչային տեղեկատվական ծառայությունների մատուցում և համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում,
ժբ. հանրակացարանում բնակվողների կենցաղի կազմակերպում և սպասարկում,
ժգ. սովորողների, աշխատողների և այլ անձանց հանգստի կազմակերպում:

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Կանոնադրության մեջ փոփոխություն է կատարվել նաև «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի 2024 թվականի փետրվարի 16-ի նիստի (Արձանագրություն թիվ 1/24) որոշմամբ:

1. Կանոնադրության 3-րդ կետում «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, բառերից հետո ավելացվել է ***«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին»*** Հայաստանի Հանրապետության օրենքին» բառերը:

2. Կանոնադրության 16-րդ կետում «հանրակրթական» բառից հետո ավելացնել **«Նախնական մասնագիտական (արհեստագործական),»** բառերը:

8. Կանոնադրության 19-րդ կետի 1-ին մասում «հաստատելու» բառից հետո ավելացնել **«նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական»** բառերը:

3. Կանոնադրության 37-րդ կետի 7-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Կնքում է Համալսարանի բյուջեից մինչև 20.000.000 (քսան միլիոն) ՀՀ դրամի կամ դրան համարժեք այլ արտարժույթի չափով ծախս առաջացնող պայմանագրեր: Նշված սահմանաչափը գերազանցող պայմանագրերը ենթակա են հաստատման Հոգաբարձուների խորհրդի կողմից: Ավանդային պայմանագրերը նախապես հաստատում է Հոգաբարձուների խորհուրդը: